Դարույր Սևակ

Անվերնագիր 28

Прошла любовь, явилась Муза...

А. С. Пушкин

Հիմա, երբ ողջը անցած է թվում,
Երբ առաջվա պես դու ինձ չես թողում,
Երբ երևալը, քայլվածքդ խոսուն
Ինձնից չեն խլում իմ ճարտար լեզուն,
Երբ ես կարող եմ քեզ հանգիստ նայել,
Սրամտելով՝ ժպիտդ շահել,
Կատակով ասել ա՛յն, ինչ որ անցավ,
Ա՛յն, ինչ ես ասել չկարողացա
Ոչ խոսքո՛վ, ո՛չ էլ մի հատիկ երգով,-
Հիմա կքել եմ տողերիս ներքո:
Եվ քո փոխարեն հիմա էլ նրանք
Դարձել են գլխիս պատիժ ու կրակ,
Ինձ՝ քո փոխարեն չեն տալիս հանգիստ -
Մերթ՝ քո անունը կպչում է հանգիս,
Մերթ՝ ձայնը ինչ-որ բառ է շշնջում,
Երբ ես չգրված թղթեր եմ շրջում.
Մերթ քո քայլվածքի լոկ հիշողությամբ
Չափեր եմ ընտրում - մեկ՝ քորեյ, մեկ՝ յամբ.
Անցյալում լոկ ինձ հասցեագրված

Քո մի ժպիտի ջերմությամբ գրված
Քանի՛ երգ ունեմ կիսատ ու լրիվ...
Բայց ի՞նչ դուրս եկավ: Չէ՛, երգ իմ, լռի՛ր:
Այսպես որ գնա, դե ի՞նչ դուրս կգա:
Հանկարծ դուրս կգա, որ սերը կրկին
Հետապնդում է... հիմա էլ երգին:
Երգից էլ երգիչն ինչքա՞ն է -
մի քա՛յլ:

19.XII.1952թ. 15.VII.1953թ.
Մոսկվա Նավչալու